

## ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆ

### ԱՐԴՅՈՔ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՀԻՆ ԴԱՐԵՐԻ ՄԻԱԿ ՔՆՆԱԴԱՏՎԱԾ ՊԱՏՄԻՉՆ Է

Բոլորս գիտենք, որ միջնադարյան Հայաստանում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» համարվել է բացարձակ ճշմարտապատում եւ անզուգական հեղինակություն վայելող պատմագրական երկ: Այս բացարձակացմանը, սակայն, տասնիններորդ դարի երկրորդ կեսից հետեւեց մեկ այլ ծայրահեղություն՝ մերժողականության շրջանը, երբ գերմանացի արեւելագետ Ալֆրեդ Ֆոն Գուդշմիտը բոլորովին արժեզուրկ հայտարարեց Խորենացու հաղորդած տեղեկությունները<sup>1</sup>, իսկ այնուհետեւ, մոտ երկու տասնամյակ անց, ֆրանսիացի արեւելագետ Օգյուստ Կարիերն առաջ քաշեց Խորենացու ավանդական ժամանակի՝ հինգերորդ դարի վերանայման անհրաժեշտությունը եւ նրան համարեց ավելի ուշ դարերի հեղինակ<sup>2</sup>: Խորենացիագիտության հետագա ընթացքը հայտնի է. առանձին խոր ուսումնասիրություններին զուգահեռ գերիշխում էր նրա ժամանակի ու արժանահավատության շուրջը բուռն՝ երբեմն նույնիսկ հայհոյանքների հասնող բանավեճ, որի արձագանքները լսելի են նաեւ այսօր:

Հայաստանում Խորենացու հեղինակությունը դեմ ամեն մի ոտնձգություն չափազանց սուր է ընկալվում, բայց եթե փորձենք պատմական մի համառոտ անդրադարձ կատարել՝ համաշխարհային պատմագիտության եւ աղբյուրագիտության ընդհանուր համատեքստում դիտարկելով այն, ինչ տեղի ունեցավ Խորենացու հետ, ապա կհամոզվենք, որ նա ամենեւին էլ 19-րդ դարում եւ 20-րդ դարասկզբին տարածված ծայրահեղ քննադատական մեթոդի միակ զոհը չէր: Միայն նրան չէ, որ տրվեցին զանազան մերժողական ու ծաղրական որակումներ, եւ միայն նրա երկում չէ, որ բացահայտվեցին, նոր ժամանակների

<sup>1</sup> Տե՛ս **A. von Gutschmid**, "Über die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren," *Berichte über die Verhandlungen der königlichen sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig, Phil.-Hist. Klasse*, 28 (1876), էջ 1–43: Նույն ուսումնասիրությունը լույս է տեսել նաեւ հետեւյալ գրքում. **A. von Gutschmid**, *Kleine Schriften*, III, Leipzig, 1892, էջ 282–338: Հայերեն թարգմանությունը տե՛ս. – «Քազմավեպ», 1877, էջ 43–51, 110–116, 213–222, 289–302:

<sup>2</sup> Տե՛ս հատկապես **A. Carrière**, *Nouvelles sources de Moïse de Khoren*, Vienne, 1893; *Supplément*, Vienne, 1894: Հայերեն թարգմանությունը՝ *Ա. Կարիեր*, Նորագոյն աղբյուր Մովսիսի Խորենացու եւ Յաւելուսի, Վիեննա, 1893 եւ 1894:

ուսումնասիրողի տեսանկյունից, «կեղծարարություններ»: Նույնպիսի ճակատագրի են արժանացել անգամ հունա-հռոմեական պատմագրության մեծագույն ներկայացուցիչները: Եվ սա միանգամայն բնական էր ակադեմիական ուսումնասիրությունների աննախադեպ վերելքի ժամանակներում, երբ 18-րդ դարի ռացիոնալիզմից ծնունդ առած նոր դասական բանասիրությունն ու պատմագիտությունը բուռն զարգացում էին ապրում, եւ ավանդական արժեքներն ամենայն անողոքությամբ վերանայվում էին:

Ֆրիդրիխ Ավգուստ Վոլֆը (1759–1824) կյանքի կոչեց հանրահայտ «Հոմերոսյան խնդիրը», որը նոր դարաշրջան էր նշանավորում<sup>3</sup>: Նրա քննադատական միտքը ոգեշնչեց գիտնականների մի մեծ բուլլի խթանելով բազմաթիվ հիմնարար ուսումնասիրությունների ի հայտ գալը: Բարթոլոմե Գեորգ Նիբուրն (1776–1831) առաջիններից էր, որ կրել էր Վոլֆի ազդեցությունը<sup>4</sup>, եւ նա էր, որ առաջին անգամ քննական, գիտական մոտեցում մշակեց Հոմերի պատմության հանդեպ՝ զարգացնելով, իր խոսքով ասած՝ «ավելի արժանահավատ շարադրանք ստանալու նպատակով աղբյուրները քանդելու եւ վերակառուցելու վերլուծական մեթոդը»<sup>5</sup>: Մյուս կողմից, սակայն, այդ նույն քննադատական ոգին էր, որ հետագայում, հատկապես 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբներին, վերափոխվեց ժխտողականության՝ որոշ գիտնականների մղելով ծայրահեղությունների: Արդյունքում, օրինակ, Հերոդոտոսը հայտարարվեց «ստերի հայր»՝ ի հակադրություն նրա «պատմահայր» մակդիրի: Նման բնորոշումների դեմ պայքարելու նպատակով շափավորության կողմնակից պատմաբաններն ու բանասերներն այսօր անգամ քիչ ջանքեր չեն գործադրում: Ներկայիս ամերիկյան հայտնի մասնագետներից մեկը՝ Ջեյմս Լյուսն, օրինակ, իր «Հույն պատմիչներ» գրքում էջեր է նվիրում «ստերի հայր» պիտակի քննադատությանը՝ հասկացնելու համար, որ, ի վերջո, «Հերոդոտոսի շատ քիչ սխալները հավասարակշռվում են ճիշտ հաղորդումների մեծ քանակով»<sup>6</sup>: Արդարացված է արդյոք առաջին հայացքից պարզ ու հնացած թվացող հարցին այսօր այդպես լրջորեն անդրադառնալը: Անկասկած՝ այո, քանզի, որքան էլ տարօրինակ թվա, հին աշխարհի պատմագիրներին ծայրահեղ գնահատականներ տալը դեռեւս հեռու է հեռավոր անցյալի պրակտիկա լինելուց: 1993 թվականին Ամստերդամում լույս տեսավ Ֆենդրիք Փրիթչեթի «Հերոդոտոսի սուտասան

<sup>3</sup> Տե՛ս J. E. Sandys, *A Short History of Classical Scholarship (from the Sixth Century BC to the Present Day)*, Cambridge, 1915, pp. 305–309:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 314:

<sup>5</sup> Տե՛ս այս մասին R. Mellor, *The Roman Historians*, London and New York, 1999, էջ 65:

<sup>6</sup> T. J. Luce, *The Greek Historians*, London and New York, 1997, p. 27 եւ հաջ.:

դպրոցը» գիրքը<sup>7</sup>, որտեղ ի մի են բերվում ու քննադատվում 20-րդ դարի երկրորդ կեսում եւ նույնիսկ վերջին տասնամյակներում դեռ Հերոդոտոսին սուտասան հռչակող մի քանի աշխատություններ:

Նման ճակատագրից չի խուսափել նույնիսկ սովորաբար անտիկ աշխարհի ամենից ճշմարտապատում պատմիչներից մեկը (եթե ոչ ամենաճշմարտապատումը) համարվող Թուկիդիդեսը: Հայտնի է 1907 թ. թվականին Լոնդոնում լույս տեսած՝ Ֆրենսիս Կորնֆորդի «Թուկիդիդես առասպելների պատմիչը» գիրքը<sup>8</sup>, որտեղ նույն «սուտասան եւ ոչ սուտասան» հակադրության տեսանկյունից քննադատվում է «Պելոպոնեսյան պատերազմի պատմությունը» գլուխգործոցը՝ որպես առասպելների գիրք: Արեւմտյան պատմագիտության մեջ այս մոտեցման յուրատեսակ ամփոփում է համարվում Նիկոլ Լոդոյի՝ 1980 թվականին լույս տեսած հոդվածն ու այդ հոդվածի վերնագիրը. «Թուկիդիդեսը մեր գործընկերը չէ»<sup>9</sup>, այսինքն՝ Թուկիդիդեսն, այնուամենայնիվ, պատմաբան չէ այսօրվա ընկալմամբ: Որպես Թուկիդիդեսի «Պատմության» ուսումնասիրության այս ուղղության ցայտուն արտահայտություն՝ հաճախ է հղվում նաեւ Վիկտորիա Հանթերի՝ 1973 թվականին լույս տեսած «Թուկիդիդես ճարտար վերապատմողը (կամ՝ գեկոլոգը)» գիրքը, որտեղ հեղինակը եզրակացնում է, թե Թուկիդիդեսը «պատմագիրներից ամենապակաս օբյեկտիվն էր», եւ որ անշուշտ «նա գիտնական չէր բառիս 19-րդ դարի իմաստով»<sup>10</sup>: Մնում է միայն տարակուսել, թե մ. թ. ա. 5-րդ դարի հեղինակն ինչու է եւ ինչպե՞ս պետք է գիտնական լիներ 19-րդ դարի նշանակությանը:

Տուժածների թվում էր նաեւ անտիկ պատմագրության մեկ այլ խոշոր ներկայացուցիչ՝ Տակիտուսը: 1910 թվականին լույս տեսած՝ Ռոլֆ Փոն Պյոլմանի «Տակիտուսի աշխարհայացքը» ուսումնասիրության հիմնական եզրակացությունն այն էր, որ Տակիտուսի աշխարհայացքը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ «չզտված եւ չհասունացած կարծիքների մի քառս, հակասությունների խառնաշփոթ»<sup>11</sup>: Ահավասիկ՝ մեկ այլ օրինակ, երբ 19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի ռացիոնալիզմը կիրառվում էր որպես անտիկ հեղինակի մասին դատելու շափանիչ:

Հունահռոմեական պատմիչների հանդեպ գերքննադատական վերաբերմունքը երբեմն-երբեմն գրսեւորվել է անգամ 20-րդ դարի՝ սովորաբար ոչ

<sup>7</sup> W. K. Pritchett, *The Liar School of Herodotus*, Amsterdam, 1985.

<sup>8</sup> F. M. Cornford, *Thucydides Mythistoricus*, London, 1907.

<sup>9</sup> Nicole Loraux, "Thucydide n'est pas un collègue", *Quaderni di Storia* 6 (1980), p. 55 եւ 81:

<sup>10</sup> V. J. Hunter, *Thucydides, the Artful Reporter*, Toronto, 1973, p. 184:

<sup>11</sup> R. von Pöhlmann, "Die Weltanschauung des Tacitus", *Sitzungsberichte der k. bayerischen Akademie, Phil.-Hist. Klasse, Abhandlung I* (1910), p. 63:

«Ծայրահեղական» համարվող կարկառուն մասնագետների կողմից, ինչպիսին է, օրինակ՝ Մովսես Ֆինլին (մահացել է 1986 թվականին): Նրա խոր ու հիմնարար աշխատությունները հաճախ են հղվում պատմագիտական գրականության մեջ, բայց, դրա հետ մեկտեղ, չի մոռացվում, ասենք, Քսենոփոնի «Հելլենիկայի» մասին նրա արտահայտած կարծիքը «Հույն պատմագիրները. Հերոդոտոսի, Թուկիդիդեսի, Քսենոփոնի ու Պոլիբիոսի էությունը» գրքում: Ըստ այդ տեսակետի՝ «Հելլենիկան» մի արժեզուրկ գործ է, «խիստ անարժանահավատ, միտումնավոր, անազնիվ, ընթերցանության համար տաղտկալի եւ ավելի լայն հարցերի վրա շատ հագվադեպ լույս սփռող»<sup>12</sup>: Սա ասվում է մի երկի մասին, որն անփոխարինելի աղբյուր է համարվում Պելոպոնեսյան պատերազմին հաջորդած իրադարձությունների համար:

Հաշվի առնելով այսօրինակ փաստերը եւ իսպառ բացակայությունը որեւէ գրավականի, թե նման՝ նոր ժամանակների եւ մերօրյա գիտության համար պարտադիր համարվող, սակայն Հերոդոտոսի եւ նրա հաջորդների աշխատանքանակի հետ ոչ միշտ համատեղելի սկզբունքների վրա հիմնված տարօրինակ դատավճիռները դեռեւս չեն բացառվում, գուցե եւ արդարացված են Աբրահամ Տերչյանի՝ համեմատաբար վերջերս լույս տեսած հոդվածում մեկ անգամ եւս կրկնվող մի շարք պարզ ու հանրահայտ ճշմարտություններ. ասենք՝ որ «հին պատմիչները պատմաբաններ չեն բառիս ժամանակակից իմաստով»<sup>13</sup>, կամ էլ՝ որ «հարկավոր չէ տարակուսանքով վերաբերվել առասպելների պատմական արժեքին», քանի որ «առասպելն ինքնին պատմական դեպքերի մասին չի պատմում», եւ այսպիսով՝ Մովսես Խորենացու «Պատմության» առաջին գրքին հիմնականում «պետք է վերաբերվել որպես գրականության եւ ոչ պատմության»<sup>14</sup>:

Պատմիչների արժանահավատության, աշխարհայացքի, աշխատանքային մեթոդների հարցերից բացի, հատկապես վերջինիս հետ սերտորեն առնչվող՝ աղբյուրների խնդիրը եւս ոչ միայն խորենացիագիտության, այլեւ առհասարակ դասական բանասիրության ու պատմագիտության գլխավոր թեմաներից մեկն է: Այստեղ պետք է շեշտել անկանխակալության եւ «հավասարակշռվածության» սկզբունքը, որը, սակայն, խախտվել է եւ շարունակում է խախտվել: Ինչպես որ Ֆոն Գուդշմիտը մեկ առ մեկ քննել է Խորենացու՝ որպես իր աղբյուրներ մատնանշած գրվածքները՝ մեծ մասամբ չհավատալով, որ նա

<sup>12</sup> M. I. Finley, *The Greek Historians: The Essence of Herodotus, Thucydides, Xenophon, and Polybius*, New York, 1959, p. 14:

<sup>13</sup> A. Terian, "Xorenac'i and Eastern Historiography of the Hellenistic Period," *Revue des études arméniennes*, NS 28 (2001–2002), p. 101–141 (130):

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 128, 130:

իրոք օգտվել է դրանցից, ճիշտ նույն եղանակով Դետլե Ֆելինգն իր «Հերոդոտոսը եւ նրա «աղբյուրները» աշխատությունների մեջ քննադատել է Հերոդոտոսի իր աղբյուրների վկայակոչումները: Նրա ուսումնասիրության նպատակն էր ապացուցել, որ Հերոդոտոսի «Պատմության» մեջ աղբյուրներից մեջբերումները կեղծ են, եւ որ հեղինակը մոգոնել է դրանք՝ իր տեղեկություններն ավելի արժանահավատ դարձնելու համար<sup>15</sup>: Ֆելինգի գրքի նման հետազոտությունները կարող են բազում հետաքրքիր դիտողություններ պարունակել, սակայն նրա այն նախապաշարումը, որ Հերոդոտոսի գիրքը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարզապես գեղարվեստական գործ, բնականաբար մասնագետների մեծ մասի բացասական գնահատականին է արժանանում:

Հին ժամանակների մատենագիրներից թերեւս ոչ մեկին խորթ չեն մարդկային այնպիսի թուլություններ, ինչպես «կեղծելն» ու հորինելը. նրանք հաճախ թաքցնում էին իրենց իրական աղբյուրները կամ գոյություն ունեցող փաստերը հարմարեցնում սեփական նպատակներին (հունահռոմեական պատմիչների «հերյուրանքների» եւ նրանց կիրառած հռետորական մեթոդների մասին գրքեր կան գրված. դրանցից հիշատակենք պատմագիտական գրականության մեջ հաճախ հղվող՝ Պիտեր Վայզմանի՝ առաջին անգամ 1979 թ. հրատարակված «Կլիոյի կոսմետիկան» (կամ, հայերեն ոչ այնքան հաջող բառով ասած՝ «գեղարարությունը») գիրքը<sup>16</sup>: Կլիոն, ինչպես հայտնի է, պատմության մուսան էր. գրքի հեղինակը բնորոշ օրինակներով ցույց է տվել, թե ինչպես էին անտիկ պատմիչներն իրենց շարադրանքը կառուցում՝ փաստերը զանազան «կոսմետիկ» մեթոդներով վերափոխումների ենթարկելով: Պատմագրական երկերում հերյուրելը եւ հռետորական այլեւայլ մեթոդների դիմելը միանգամայն ընդունելի եւ սովորական երեւոյթ էր համարում դեռեւս Կիկերոնը՝ իր «Հռետորի մասին» երկխոսության մեջ (2.62–64) շեշտելով պատմիչների համար *inventio*-ի կարեւորությունը, ինչի տակ նա հասկանում էր «հնարամտություն» ու, չափի սահմաններում, «հորինելու ունակություն»:

Բերենք նաեւ «կեղծարարության» օրինակներ: Հերոդոտոսը եգիպտացիներին է վերագրում տեղեկությունն այն մասին, թե իբր Քեմմիս կղզին լողում է. իր հաղորդումը նա սկսում է «ինչպես ասում են եգիպտացիները» բառերով, մինչդեռ իրականում նա այդ մասին գիտեր շնորհիվ ոչ թե եգիպտացիների, այլ իր նախորդ Հեկատեոս Միլետացու երկի<sup>17</sup>: Կամ նույնիսկ Տակիտու-

<sup>15</sup> D. Fehling, *Die Quellenangaben bei Herodot*, Berlin, 1971.

<sup>16</sup> T. P. Wiseman, *Clio's Cosmetics*, Leicester, 1979. տե՛ս նաեւ A. J. Woodman, *Rhetoric in Classical Historiography*, London, 1988:

<sup>17</sup> Հմմտ. J. Marincola, *Greek Historians, Greece and Rome: New Surveys in the Classics*, № 31, Oxford, 2001, p. 33:

սը, որն, իր իսկ հանրահայտ խոսքով ասած (*Annales 1.1*), գրում էր «առանց զայրույթի եւ կողմնապահության» (*sine ira et studio*), բնավ դեմ չէր հանգամանքների բերումով իր աղբյուրներն ու իրականությունը խեղաթյուրելուն, մի երեւույթ, որը նրան նվիրված մի նշանակալից նորագույն ուսումնասիրության մեջ որակվում է որպես աղբյուրների «չարամիտ վերամեկնաբանություն» (*malicious reinterpretation*)<sup>18</sup>:

Այսպիսի «կեղծարարություններ», ավելի կամ պակաս չափով, կարելի է գտնել ցանկացած պատմագրական գրվածքում, ինչը չպետք է առիթ տա այս կամ այն հեղինակի պիտակավորման ու պարզունակ ընդհանրացումների, ինչպես, օրինակ, «ստերի հայր»՝ փոխանակ «պատմահայր», կամ հորենացուն տրված «առաջին կարգի միստիֆիկատոր» հայտնի բնորոշումները<sup>19</sup>: Վաղ անցյալում պատմության ըմբռնումն ավելի լավ հասկանալու եւ արդյունավետ եղանակով գնահատելու համար նախընտրելի է հին ու միջնադարյան պատմագրության մեջ ինչպես առանձին հեղինակների անհատական, այնպես էլ ընդհանուր մեթոդների մանրակրկիտ եւ անկանխակալ քննությունը: Արդեն իսկ այս թեմային նվիրված ծավալուն գրականություն կա՝ Հերոդոտոսի, Պոլիբիոսի, Տիտոս Լիվիոսի եւ այլոց երկերին նվիրված<sup>20</sup>: Մեծ աշխատանք է կատարվել նաեւ հորենացու մեթոդների եւ աղբյուրների ուսումնասիրության ուղղությամբ<sup>21</sup>, որը, սակայն, պետք է շարունակել:

հորենացու եւ անտիկ պատմիչների միջեւ մեր անցկացրած զուգահեռը

<sup>18</sup> C. S. Kraus & A. J. Woodman, *Latin Historians, Greece and Rome: New Surveys in the Classics*, № 27, Oxford, 1997, p. 98:

<sup>19</sup> Moses Khoranats'i, *History of the Armenians*, translation and commentary on the literary sources by R.W. Thomson, Cambridge (Mass.), London, 1978, p. 56 (revised edition: Ann Arbor, 2006, p. 55):

<sup>20</sup> Տե՛ս, օրինակ, P. G. Walsh, *Livy: His Historical Aims and Methods*, Cambridge, 1961; P. Pédech, *La méthode historique de Polybe*, Paris, 1964; D. Lateiner, *The Historical Method of Herodotus*, Toronto, 1989. տե՛ս նաեւ հետաքրքիր ֆնտարկումներ հետեւյալ աշխատություններում. T. J. Luce, *The Greek Historians*, p. 20–25, 60–79; R. Mellor, *The Roman Historians*, p. 43–47, 63–70, 88–94, 115–118; J. Marincola, *Greek Historians*, էջ 31–39, եւ ընդհանուր ակնարկ՝ C. W. Fornara, *The Nature of History in Ancient Greece and Rome*, Berkeley, Los Angeles, London, 1983, pp. 47–90 ("Research, Orientation, and Explanation in the Greek and Latin Historians" գլուխը):

<sup>21</sup> Տե՛ս օրինակ, Գ. Սարգսյան, «Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ». – «Բանբեր Մատենադարանի», հ. 3, 1956, էջ 31–42 եւ Ա. Թոփչյան, Մովսես Խորենացու հումական աղբյուրների խնդիրը, Երեւան, 2001. անգլերեն բարեխոսված հրատարակությունը՝ A. Topchyan, *The Problem of the Greek Sources of Movses Xorenac'i's History of Armenia*, *Hebrew University Armenian Studies 7*, Leuven–Paris եւ Dudley, MA, 2006: հորենացու աղբյուրների ուսումնասիրության պատմության վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տե՛ս մեր նշված աշխատության առաջ-բանը:

պայմանական է: Թերեւս ավելի ճիշտ կլիներ զուգահեռներ փնտրել նրա եւ նրան ժամանակով ավելի մոտ, օրինակ՝ վաղ բյուզանդական հեղինակների միջեւ: Մեր համեմատութիւնը, սակայն, թույլ է տալիս համոզվել, որ դաժան քննադատութիւնից չեն փրկվել անգամ հունա-հռոմեական մեծագույն դասականները: Նրանց առիթով էլ, ինչպէս Խորենացու դեպքում, բանավիճողներն ընկել են ծայրահեղութիւնների մեջ. միակողմանի խիստ քննադատութիւն, կամ, որպէս դրա հակակշիռ, քննադատութիւնից իսպառ զուրկ, «հարյուր տոկոսանոց» վստահութիւն: Երկարատեւ իրարամերժ ելույթներից հետո, այնուամենայնիվ, անտիկ ու միջնադարյան պատմագրութեան վերաբերյալ այսօրվա արեւմտյան աշխատութիւններում ակնհայտորեն գերիշխում է շափավորութիւնն ու հավասարակշիռ մոտեցում մշակելու պահանջը<sup>22</sup>: Վաղուց արդեն ժամանակն է, որ այդ պահանջը սովորական դառնա նաեւ Մովսես Խորենացուն ուսումնասիրողների համար:

<sup>22</sup> Այդ պահանջը լավ է ձեւակերպված Ջ. Մարինկոլայի արժեքավոր ուսումնասիրության մեջ (լրիվ հղումը տե՛ս ծնթ. 17-ում). **J. Marincola**, *Greek Historians*, p. 31: